42


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

**STATE REVENUE COMMITTEE**
**OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**
**HEAD OF STAFF**

0015 Երևան, Մ. Խորենացու 3
0015 Yerevan, M. Khorenatsi 3
Հեռ./Tel. +3741 59 43 01
Ֆաքս/Fax +3741 53 64 00


№ 33455/1ք 18 12 2008 թ.

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
ղեկավար պրն. Ա. Շահնազարյանին

Հարգելի պարոն Շահնազարյան

Կից ներկայացնում ենք ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մեկ անձից գնման ձևով կազմակերպված ամանորյա նվերների, հուշանվեր ժամացույցերի ձեռքբերման, ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայությունների գնման ընթացակարգի արձանագրությունները:

Առդիր 142 թերթ:

Մ/Ճ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Ա.ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատ.Գ.Ղազարյան.
Հեռ. 594-626

9614-09

Հաստատում եմ

Ա.Սիմոնյան

«17» դեկտեմբերի 2009թ. Կ.Տ.

# ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հասցեն ք.Երևան, Մ.Խորենացու 3

1.2. Գնման առարկայի տեսակը

ծառայություն ☑

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ☑

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը *Ամանորյա միջոցառման կազմակերպում*
1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի
Անվանումը (անունը, ազգանունը) «Ֆի-Արտ» ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ս.Վրացյան 71, բն 7

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցված է)

Ծածկագիրը Թիվ ԾՁԲ-56
Կնքման ամսաթիվը 17.12.2009թ
Գործողության ժամկետը 28.12.2009թ
Գինը 29500000/Քսանինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2009թ. արտաբյուջետային միջոցներ

2. Գնման գործընթացի նախապատրաստումը
2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը *ՀՀ ԿԱ ՊԵԿ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի նախահաշվի հաստատման օր*
Օրը, ամսաթիվը 03.12.09թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝
Պատասխանատու ստորաբաժանում
Անվանումը Գործերի կառավարման վարչություն

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝
☑ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման անհետաձգելի պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը :

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ 2009 թվականի աշխատանքային գործունեության, այդ թվում բյուջետային մուտքերի հավաքագրելիության և հարկային ու մաքսային վարչարարության կատարելագործման բարեփոխումների ծրագրի տարեկան ընթացքի արդյունքները ամփոփելու, 2010 թվականի գործունեության ուղղությունները նախանշելու, ինչպես նաև կոմիտեի անձնակազմի ամանորը շնորհավորելու համար նախատեսում է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի, տարածքային հարկային տեսչությունների, մաքսատների և մաքսակետերի պաշտոնական անձանց մասնակցությամբ կազմակերպել ամանորյա միջոցառում: Ամանորյա միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով մինչև ս/թ դեկտեմբերի 28ը առաջացել է վերոհիշյալ ծառայության գնման պահանջ, ինչով պայմանավորված 03.12.2009թ փոփոխություն է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ ճյուղային խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի նախահաշվում և հատկացվել է 29 500 000 դրամ, ինչպես նաև առկա է ՀՀ Ֆինանսների նախարարության /16.12.09թ. 13/13-683-8446/ համաձայնությունը, որպեսզի գնումները իրականացվեն հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով: Հաշվի առնելով ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայության ձեռքբերման նպատակով գնման այլ ձևերի կիրառման ժամկետային անհնարինությունը, գնման գործընթացը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ☒

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անունը, ազգանունը) | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (լցվում է) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Ֆի-Արտ» ՍՊԸ | ք. Երևան, Ս.Վրացյան 71, բն 7 | 17.12.2009թ 33296/18 |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անունը, ազգանունը) | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Ֆի-Արտ» ՍՊԸ | ք. Երևան, Ս.Վրացյան 71, բն 7 | 17.12.09թ. |

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.
Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☒

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ☒

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ ☒

3.5. Բանակցություններ
Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☒

4. Կասեցում
Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☒

5. Բողոքարկում
Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ☒

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☒

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անունը, ազգանունը Մարինե Մուրադյան

Պաշտոնը ՀՀ ԿԱ ՊԵԿ գնումների և շինարարության բաժնի առաջին կարգի մասնագետ

Հեռախոսը /աշխ./ 594 697

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

STATE REVENUE COMMITTEE
OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF

0015 Երևան, Մ. Խորենացու 3
0015 Yerevan, M. Khorenatsi 3
Հեռ./Tel. +3741 59 43 01
Ֆաքս/Fax +3741 53 64 00

N [illegible] «[illegible]» 12 2009

*«Փի-Արտ» ՍՊԸ*

*Տնօրեն Կ.Քոչարյանին*

*ՀՀ ԿԱ ՊԵԿ 2009թվականի աշխատանքային գործունեության արդյունքները ամփոփելու, ինչպես նաև կոմիտեի անձնակազմի ամանորը շնորհավորելու համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայություն:*

*Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:*

*Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ « Փի-Արտ » ՍՊԸ ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք. մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝*

4. *դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,*
5. *գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,*
6. *իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:*

*Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:*

*Միաժամանակ կից ներկայացնում ենք գնման պայմանագրի նախագիծը:*

***Ս/Ծ փոխգնդապետ*** ***Ա.Սեդրակյան***

17.12.2009թ

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊՐՆ Ա.ՍԵՂՐԱԿՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Սեղրակյան**

Ի պատասխան Ձեր 17.12.09թ. թիվ 33296/18 գրության՝ սույնով հավաստում ենք, որ «Փի-Արտ» ՍՊԸ ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,

- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1. դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
2. գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
3. իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանգրի միակողմանի լուծմանը:

«Փի-Արտ» ՍՊԸ հայտնում է իր համաձայնությունը Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայությունը իրականացնելու համար:

Ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայության կատարման ընդհանուր գումարը 270 անձի համար կկազմի 29 500 000 /Քսանինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

«Փի-Արտ» ՍՊԸ տնօրեն Կ.Քոչարյան

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՉԲ- 56**

Ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայության

«17» դեկտեմբերի 2009թ.

**ք. Երևան**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Սեդրակյանի, մի կողմից, և «Փի-Արտ» ՍՊԸ, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Կ.Քոչարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

# 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալով և ժամկետներում Պատվիրատուի համար իրականացնել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող **թիվ 1 հավելվածով** նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի, տարածքային հարկային տեսչությունների, մաքսատների և մաքսակետերի պաշտոնական անձանց համար ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայություն /այսուհետև՝ «Ծառայություն»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայության կատարման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև _28.12.2009թ. ներառյալ:

# 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայության իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից իրականացված Ծառայության արդյունքը չի համապատասխանում սույն պայմանագրի պահանջներին և /կամ/ խախտվել է Ծառայության իրականացման ժամկետը և Ծառայությունը չի կարող իրականացվել Կատարողի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ծառայության իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.1.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան իրականացված Ծառայության արդյունքը, իսկ իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան իրականացված Ծառայության արդյունքը :

2.3.2. Մինչև Կատարողի կողմից Ծառայության իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողն պարտավոր է՝**

2.4.1.Ծառայությունը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, նյութերով ու պատշաճ որակով:

2.4.2. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության իրականացումը ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.4. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը Ծառայության կատարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իրականացված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության ընդհանուր գումարը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է **29 500 000 /Քսանինը միլիոն հինգ հարյուր հազար /ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Պայմանագրի 100%-ը 29 500 000 /Քսանինը միլիոն հինգ հարյուր հազար /ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար, պայմանգիրը ուժի մեջ մտնելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում, որը մարվում է մինչև ծառայության մատուցման ավարտը: Պատվիրատուն ծառայության արդյունքի դիմաց Կատարողին վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում կատարված Ծառայության արդյունքի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից իրականացված Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայության արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության կատարման համար Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «ՓԻ -ԱՐՏ » ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3 | ք. Երևան, Ս.Վրացյան 71, բն 7 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Աոէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013574018 | Հ/Հ 2380017731060100 |
| ՀՎՀՀ 02591206 | ՀՎՀՀ 00080887 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| Ա.Մեղրակյան | Ա.Քոչարյան |

Հավելված N-1
«17» «12» 2009թ. կնքված
«ԾՀԹ-56» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Չ/մ | Քանակը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | «Մարիոտ-Արմենիա» հյուրանոցային համալիրի Տիգրան Մեծ սրահում ս/թ դեկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի, տարածքային հարկային տեսչությունների, մաքսատների և մաքսակետերի պաշտոնական անձանց համար կազմակերպել ամանորյա միջոցառում՝ հայկական շոու-բիզնեսի երգիչների և հումորիստների մասնակցությամբ: | անձ | 270 | 29 500 000 |
| Ընդամենը՝ | | | | 29 500 000 |

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018
ՀՎՀՀ 02591206

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ Ա.Մեղրակյան

**Կատարող**
«ՓԻ -ԱՐՏ » ՍՊԸ
ք. Երևան, Ս.Վրացյան 71, բն 7
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ»
ՓԲԸ
Հ/Հ 2380017731060100
ՀՎՀՀ 00080887

Տնօրեն՝ Գ.Քոչարյան

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՁԲ- 56**

**Ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայության**

**/Նախագիծ/**

**ք. Երևան** « » **2009թ.**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Սեդրակյանի, մի կողմից, և «______________»_____ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն ________________________, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար իրականացնել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող **թիվ** 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի, տարածքային հարկային տեսչությունների, մաքսատների և մաքսակետերի պաշտոնական անձանց համար ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայություն /այսուհետև՝ «Ծառայություն»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայության կատարման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև _28.12.2009թ. ներառյալ:

## 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայության իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից իրականացված Ծառայության արդյունքը չի համապատասխանում սույն պայմանագրի պահանջներին և /կամ/ խախտվել է Ծառայության իրականացման ժամկետը և Ծառայությունը չի կարող իրականացվել Կատարողի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Ծառայության իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.1.5 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասերն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան իրականացված Ծառայության արդյունքը, իսկ իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման
դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան
իրականացված Ծառայության արդյունքը :

2.3.2. Մինչև Կատարողի կողմից Ծառայության իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի
կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ
մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման
դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի
5.5. կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողը պարտավոր է՝**

2.4.1.Ծառայությունը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և
ժամկետներում, իր ուժերով, նյութերով ու պատշաճ որակով:

2.4.2. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության իրականացումը
ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում
հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.4. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից
սահմանված լրացուցիչ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին
վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով
նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը Ծառայության կատարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա
ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իրականացված Ծառայության մասին իր կողմից
ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5
աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-
ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված
մերժումը:

3.3. Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը
երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության ընդհանուր գումարը, ներառյալ
ԱԱՀ-ն, կազմում է ______________/______________________________ /ՀՀ դրամ: Պայմանագրի
գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը,
այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Պայմանագրի 100%-ը ______________/______________________________/ՀՀ դրամը
Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար, պայմանգիրը ուժի
մեջ մտնելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում, որը մարվում է մինչև ծառայության մատուցման
ավարտը: Պատվիրատուն ծառայության արդյունքի դիմաց Կատարողին վճարում է ՀՀ դրամով
անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման
վրա՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում կատարված Ծառայության արդյունքի որակի և
սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3.
կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից իրականացված Ծառայությունը չընդունվելու
յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայության արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության կատարման համար Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3 | |
| ՀՀ ֆինանսների նախարարության | |
| աշխատակազմի գործառնական վարչություն | |
| Հ/Հ 900013574018 | |
| ՀՎՀՀ 02591206 | |

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սեդրակյան

Հավելված N-1
«    » «    » 2009թ. կնքված
«ԾՉԹ-56» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Չ/մ | Քանակը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Մ/թ դեկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի, տարածքային հարկային տեսչությունների, մաքսատների և մաքսակետերի պաշտոնական անձանց համար կազմակերպել ամանորյա միջոցառում՝ հայկական շոու-բիզնեսի երգիչների և հումորիստների մասնակցությամբ: | անձ | 270 | |
| | Ընդամենը՝ | | | |

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018
ՀՎՀՀ 02591206

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սեդրակյան

**Կատարող**